



Ս Մ Ս Ս Ա Գ Ի Ր

ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՒ Գ. — ՏԵՐԻ Գ.

1871

ՅՈՒՂԻՍ 31

Կ Ր Ո Ն Ա Կ Ա Ն

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂ. ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԱՐԱՐԵԱԼ
Ի ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՄԻԼԱՅԻՄԵԱՆ

«Երևի իւղաւորաց, զի նոս որդի
Աստուծոյ իւղեցին» : Մարտի Ե. 9 :

Անհնարին աղէտք և անտանելի թշու-
ւառութիւնք՝ որք ի վաղուց հետէ պա-
տառեն և գիշաանն զհայկական Ակեղեցին

Վրիստոսի, հրակէզ նետիւք ցաւակցու-
թեամբ վիրաւորեն զմիտս ամենայն ողղա-
փառ քրիստոնէից, և զաղբիւրս արտա-
սուաց բղխեցուցանեն յաչաց յամենայն
քրիստոսասէր հաւատացելոց: Զի ո՞վ է
այնքան ամբարիշտ և անօրէն, որ ո՛չ ցա-
ւակից լինի այսպիսի թշուառութեանց՝
երբ տեսանէ զԱկեղեցին Աստուծոյ ի վը-
տանգի կործանման եղեալ, ի բոլոր (երկիր)
արևելից զխաղաղութիւնն Վրիստոսի վեր-

դովեալ, զօրէն եղբայրսիրութեան աւերեալ, զանունն Աստուծոյ ի մէջ հեթանոսաց հայհոյեալ, զքրիստոնեայս աաել և հերձուածող անուանել զեղբարս իւրեանց՝ զհաւատն Վրիստոսի ուրացեալ, և զայլ այսպիսի աղմուկս և խռովութիւնս՝ զորս զժուարին և ողբալի է թուել, և ընդ միտս ոգորել: Աւ ո՞վ է այնքան խրատաբարոյ և քարասիրտ որ ոչ հոգացի կուռն ջանիւ զզեղ ինչ բժշկութեան հրնարել այսքան և այսպիսի անտանելի գայթակղութեանցս: Այնպէս ճշմարիտ թուի ինձ թէ՛ ցայդ և ցերեկ թէ՛ ննջեմ և թէ՛ յառնեմ, թէ՛ նստիմ և թէ՛ շքիմ, հանապաղ ահագին և սոսկալի ձայն մի հնչէ յականջս իմ անդադար, եթէ բարձէք ըզքարինս գայթակղութեան ի ճանապարհէ ոչխարաց խնոց:

Արդ՝ քանզի բազում և զանազանք են քարինք գայթակղութեան, ընդ որս զթեալ խեղճ և միամիտ ոչխարքն հօտին մերոյ զլորին ի խորխորատս կորստեան: Այնայնորիկ տկար զօրութիւն իմ ոչ եղև բաւական բառնալ զայն ամենայն քարինս ի միանին, սպա բուռն արկի բառնալ զմի միայն քարն գայթակղութեան, յուսալով զև և այլ բազում քրիստոսասէրք ունին երևիլ, որ զմնացեալ քարինան բառնայցեն. իսկ ի մէջ ամենայն քարանցս այսոցիկ, ընտրեցի ես զմեծադոյն քարն, որ առաւել փնասակար եղևոլ է բանաւոր ոչխարացն Վրիստոսի: Աւ այն քարն է արգիտութիւն ճշմարիտ նշանակութեան կաթուղիկէ եկեղեցոյն: Քանզի բազում արգեաք ազդիս մերոյ՝ ոչ հասկանալով ըզկաթուղիկէ եկեղեցոյն նշանակութիւնն, պատճառ և առիթ եղեն այս ամենայն վե-

րոյզրեալ շփոթմանց և խռովութեանց, որպէս յայտ է ամենեցունց:

Այնն որոյ բուռն արկի ես տկար զօրութեամբս բառնալ զայս ծանրագոյն քարս գայթակղութեան, մեկնելով զկաթուղիկէ Ակեղեցին ըստ աւետարանական վարդապետութեան, և բազում վեկայութեամբ սուրբ Հայրապետաց և աստուածաբան վարդապետաց ամենայն ագգաց: Աւ զայս արարի կարճաւօտ բանիք, զի ամենեքեան զիւրաւ կարասցեն ընթեռնուլ զնա, և ճանաչել զճշմարտութիւնն, զի դադարեացին ի վերջովերոյ զԱկեղեցին Վրիստոսի:

Բայց յառաջ քան զսկսանել զմեկնութիւն կաթուղիկէ Ակեղեցոյն, ունիմ քանի մի բանս ծանուցանել ընթերցողացն՝ որք են այսոքիկ:

Ասխ և առաջին վկայ կոչեմ զԱստուած՝ այն թէ, ոչ վասն հաճելոյ երկարնակաց արարի զայս մեկնութիւն, այլ միայն վաստ հաճելոյ Աստուծոյ մերոյ, և վասն յայտնելոյ զճշմարտութիւնն ի պէտս խաղաղութեան Հայաստանեայց սուրբ Ակեղեցոյն Վրիստոսի:

Արկրորդ՝ վկայէ Աստուած ի հոգի իմ՝ զի վկայութիւնք սուրբ Հայրապետաց և Աստուածաբան Արդապետաց ամենեին հաւատարիմ և ճշմարիտ են, և ոչինչ ստութիւն կայ ի նոսա:

Արրորդ՝ զիտելի է, զի այս մեկնութիւնըս մանաւանդ վասն խրատելոյ զերկարնական շարադրեցի. քանզի երկաբնակքն առաւել հաւատան վարդապետացն Աթինացոց, քան թէ այլոց ազգաց. վասնայնորիկ և ես եղի միայն զվկայութիւնս Աթինացոց. իսկ զմիւս վկայութիւնն յի-

չեցի միայն և ոչ զրեցի առ ի հրաժարել յերկարաբանութենէ:

Չորրորդ՝ գիտելի է, զի ուրեք ուրեք յիշելով զԵւետարանն, անուամբ Եւետարանին զբովանդակ նոր Ատակարանն իմանամք: Քանզի Եւետարանն է այն զիրք, որ ունի յինքեան զաւետիսն՝ զոր առաքեալքն աւետարանեցին յաշխարհի. իսկ բովանդակ նոր Ատակարանն ունի յինքեան զաւետիսն առաքելոյ. ապա ուրեմն բովանդակ նոր Ատակարանն Եւետարանն է:

Հինգերորդ՝ խոստովան լինիմ անկեղծ սրտիւ առաջի Եսաուծոյ և մարդկան. զի զայս մեկնութիւն եղից ի ներքոյ զատողութեան Հայրապետին իմոյ սրբազան Աթողիկոսին Էջմիածնի, և պատրիարզին իմոյ Առստանդինուպօլսի. զի չեմ մոռացեալ զայն բան սուրբ Եւետարանին զոր Տէրն մեր ասէ՝ եթէ որ Ակեղեցւոյն ոչ լուիցէ, եղեցի քեզ իրրև զհեթանոս և զմարտաւոր: Այսն որոյ խոստովան լինիմ առաջի Եսաուծոյ, զի թէ գլխաւորք Ակեղեցւոյն իմոյ Աթողիկոսն Էջմիածնի և Պատրիարդ Առստանդինուպօլսի հաճեցին ընդ սոյն մեկնութիւն, յայնժամ ընդունիմ և ես զսա ճշմարիտ զոյ. և որ ինչ բան պարտաւորեն նորա ի մեկնութենէ աստի, պատրաստ եմ և ես անկեղծ սրտիւ պարտաւորել զայն բան, համարելով զայն իրրև սխալանք ազիտութեան իմոյ:

Քանզի Տէրն մեր Յիսուս Քրիստոս խոստացաւ զհոգին ճշմարտութեան՝ ոչ եթէ ինձ նման առանձնակի մարդկանց, այլ առաքելոցն սրբոց և յաջորդաց նոցին՝ որք հովուեն և առաջնորդեն զմեզ: Աւստի սոքիկ են Աթողիկոսն Էջմիածնի և

Պատրիարդն Առստանդինուպօլսի. զի քլասան են հովիւք և առաջնորդք մեր. այս էր՝ զոր ունէի ծանուցանել ընթերցողացդ:

Եպա եկեացուք այժմ ի մեկնութիւն Աթողիկէ Ակեղեցւոյ:

Ակեղեցին է բարբառ Հուռմոց, և թարգմանի ժողովուրդ, տաճկերէն ճիւմայէթ: Աւ ի մէջ Եւետարանին ու ի չորս նշանակութիւն: Ախ և առաջին նշանակէ զտունս հաւատացելոյ. այսինքն՝ զայր և զկին, զորդիս և զայլ հաւատացեալ ընտանիսն ի միասին, որք են իրրև զփոքրիկ ժողովուրդ մի: Եյսպէս և Պօղոս Եռաքեալն ի թուղթն Հովմայեցւոց Ակեղեցի անուանէ զհաւատացեալ ընտանիսն Պրիկեսայ և Եկիւղեայ, զայս ասելով՝ ողջոյն տաջէք Պրիկեսայ և Եկիւղեայ և անին եկեղեցւոյն նոցա, այսինքն ամենայն ընտանեաց: Այոյպէս և առ Պիլիմոն սիրելոյ և անանին Ակեղեցւոյդ, այսինքն ամենայն ընտանեաց քոց: Այլուս այսպիսի եկեղեցեաց տանուտարքն են:

Արիւրորդ՝ նշանակէ եկեղեցին զժողովս քրիստոնէից միոյ քաղաքի, այսինքն յորժամ քաղաքի միոյ քրիստոնեայք ժողովին ի միասին հանդերձ եպիսկոպոսօքն, և երիցամբքն և իշխանաքն իւրեանց, թէ առ ի աղօթել, թէ առ ի լսել զքարոզս, թէ առ ի մտանել ի խորհուրդ և կամ անեւ զատ ինչ. այսպիսի ժողովք սովոր են կոչել Ակեղեցի. որպէս Եռաքեալն Պօղոս ի յառաջնորդութեան Աորնթացւոց, ի զբլուս 11, 14, եկեղեցի անուանէ զժողովն, ուր ժողովեալ էին քրիստոնեայքն Աորնթոսի առ ի աղօթել, հանրոյել, քարոզել, և մեկնել զսուրբ գիրսն, և վասն այլ ինչ

Հոգեոր իրաց. և ասէ ի 11 գլուխն: 'Նախ՝
 յորժամ ի մի վայր ժողովեք յեկեղեցին՝
 այս է ի ժողովն՝ ուր ժողովեք ի միա-
 սին:

Աւ դարձեալ ի 14 գլուխն, կանայք
 յամենայն եկեղեցիս լուս լեցին, այս է ի
 ժողովս քրիստոնէից արանց և կանանց
 վասն Հոգեոր իրաց: Աւ վասն այսպիսի
 մասնաւոր ժողովոց Տէրն մեր խօսի՝ երբ
 ասէ, եթէ մեղեցէ քեզ եղբայր քո, եթէ
 յանդիմանեա՛ զնա և որ ի կարգին. և յե-
 տոյ թէ յորժամ քեզ և այլոց ոչ լուիցէ,
 ասասջն'ր յԱկեղեցւոջն. և թէ ևս ոչ լու-
 լիցէ, եղեցի քեզ իբրև զհեթանոսս և
 զմաքսաւոր, այսինքն յորժամ մեղուցեալ
 եղբայրն քո, քեզ և երկուց և երկց ոչ
 լուիցէ, յայնժամ յայանեա՛ զնա առաջի
 ժողովրդեան՝ յորժամ ժողովին ի մի վայր,
 ապա և թէ նոցա ոչ լուիցէ, յայնժամ
 պարտ է զնա արտաքս ձգել ի ժողովրդենէ
 ձերմ, և ոչ ևս հայիլ ընդ նա իբրև ընդ
 քրիստոնեայ, այլ իբրև ընդ հեթանոս.
 վասնորոյ յայսմիկ տեղւոջ եկեղեցին նը-
 շանակէ զժողովն քրիստոնէից քաղաքի
 միոյ, երբ ժողովին ի միասին վասն դա-
 տելոյ զայլս:

Քանզի ի նախկին ժամանակս սովորու-
 թիւն էր ժողովի վասն դատելոյ զչարա-
 գործ և որոշելոյ ի ժողովրդենէն, յորժամ
 անկեղջ քնայր ի չարութեան իւրում:
 Այսպէս ի ժամանակս առաքելոց կայր ի
 մջ Աորնթացւոց քրիստոնեայ մի, որ ըզ-
 կին հօր իւրոյ առեալ էր իւր ի կնութիւն:
 Յորժամ զիտաց առաքեալն Պօղոս, զը-
 բեաց առ Աորնթացիսն և հրաման ետ ժո-
 ղովի յանուն հեռան մերոյ Յիսուսի
 Վրիստոսի մասնել սատանայի:

Աւստի յայտ է թէ ի նախկին ժամա-
 նակս վասն այսպիսի իրաց ժողովին և ժո-
 ղովն այն եկեղեցի անուանէր. վասնայնորիկ
 և Տէրն մեր ասէ, եթէ քեզ ոչ լուիցէ ա-
 սա՛ յեկեղեցւոջ. և այս յայանի լինի ի
 հեռեալ բանից Փրկչին, որ սակաւ ինչ
 զինի ասէ՝ ուր իցեն երկու և երեք ժողո-
 վեալ յանուն իմ, անդ եմ և ես ի մջ
 նոցա: Աւ այսպիսի եկեղեցեաց զլուիք,
 առաջնորդք քաղաքացն են:

Արրորդ՝ եկեղեցին նշանակէ զժողովուր-
 դըս կամ ազգ մի քրիստոնէից. զորօրինակ
 հաւատացեալ ժողովուրդն շառմայեց-
 ւոց՝ անուանի Ակեղեցի շառմայեցւոց:
 Ազգն շայոց՝ կոչի Ակեղեցի շայոց: Ազ-
 գն Յունաց՝ կոչի Ակեղեցի Յունաց և ին:
 Այսպէս և առաքեալն Պօղոս եկեղեցի
 կոչէ զժողովուրդն Աորնթացւոց և թե-
 սաղոնիկեցւոց, յասելն՝ Պօղոս կոչեցեալ
 առաքեալ Յիսուսի Վրիստոսի Ակեղե-
 ցւոյդ Աստուծոյ, որ է ի Աորնթոս, այս է
 ժողովուրդ Աստուծոյ, որ է ի Աորնթոս.
 և յայլ ինչ տեղի ասէ թէ՛ մեք չունիմք
 այդպիսի սովորութիւն և ոչ Ակեղեցիքն
 Վրիստոսի Աստուծոյ, այսինքն ժողովուր-
 դն Աստուծոյ, որ ընդ ամենայն աշխարհ
 սիւսեալ կան: շանդոյն սոցին անթիւս
 գտցես ի մջ թղթոցն Առաքելոց և յայլ
 զիրան նոր կտակարանին: Այսպէս և զժո-
 ղովուրդն Ափեսոսի Ակեղեցի կոչէ Պօղոս
 գրելովն առ Տիմոթէոս: Վիտացես թէ
 որպէս պարտ է քեզ ի տանն Աստուծոյ
 շջիլ, որ է եկեղեցի Աստուծոյ կենդանոյ,
 այսինքն ի մջ ժողովրդեանն Աստուծոյ:
 Աւ այսպիսի եկեղեցիք սովորեն կոչել
 մասնաւոր եկեղեցի. և զլուս այսպիսի ե-
 կեղեցեաց շայրապետքն են: Արպէս մաս-

նաւոր եկեղեցւոյն Աթինացւոց՝ զլուխ Փափն է: Մասնաւոր եկեղեցւոյն Հայոց՝ զլուխ սուրբ ԼԶմիածնի Աթոյեկոսն է, ըստ այսմ և այլքն:

Չորրորդ՝ նշանակէ եկեղեցին ամենեւին զամենայն հաւատացեալսն՝ որք գասնին ի սփիւռս աշխարհաց, հանգերձ ամենայն Հայրապետօք և եպիսկոպոսօք և երիցամբք ի միասին:

Այսպէս Ըռաքեալն Պօղոս Ակեղեցի կոչէ զամենայն քրիստոնեայս ամենայն ազգաց և ժողովրդոց, յառաջնն թուղթն Աորնթացւոց, ի 12 գլուխն. և յԱփեսացւոց՝ ի 5 գլուխն. և յայլ բազում տեղիս բազում անգամ:

Ահա՛ այս Ակեղեցի է որ անուանի Աթուղիկէ, այսինքն ընդհանրական տիեզերածաւալ և տարածեալ ընդ ամենայն աշխարհ, և բաղկացեալ յամենայն ազգաց քրիստոնէից: Ասան այս Ակեղեցւոյս խօսի Տէրն մեր Քրիստոս ի բանս իւր թէ՛ յարեւելից և յարեւմտից եկեացն և բազմեացին ընդ Եբրահամու յարքայութեանն երկնից. վասնորոյ և առաքեաց զառաքեալսրն ընդ ամենայն աշխարհ բարոզել ամենայն արարածոց: Աւ սոյն Ակեղեցի այսպէս սահմանի ի սրբոյն Օգոստինոսէ, և ի ժողովոյն Աարթաղինէի, և յայլ ամենայն սրբոց Հայրապետաց և ի տիեզերագումար ժողովոյն:

Ասանորոյ յայտ է կաթուղիկէ Ակեղեցին նշանակէ ընդհանրական և տիեզերածաւալ ժողովուրդն ամենայն հաւատացեալ ազգաց քրիստոնէից, որք բնակեալ են ընդ ամենայն աշխարհ, թէ Հայ, թէ Հռոմ, թէ Ֆրանկ, թէ որ ազգ և իցէ, որք ամենեքեան ի միասին բաղկացուցա-

նեն զԱթուղիկէ Ակեղեցին, որ է ընդհանրական ժողովուրդ Քրիստոսի. և այս ընդհանրական Ակեղեցւոյն զլուխ միայն Քրիստոս է:

Երդ՝ զիտելի է. զի թէպէտ Ակեղեցին ըստ առաջնն երից նշանակութեանց բազումք են, բայց ըստ չորրորդ նշանակութեանն պարտի մի միայն լինել. վասն որոյ ասեմք ի հաւատարմքն մեր. Հաւատամք ի մի միայն ընդհանրական Աթուղիկէ և առաքելական սուրբ Ակեղեցի: Ասան որոյ և Տէրն մեր Յիսուս ասէ. ես եմ հովիւ քաջ, և այլ ևս ոչեարք են իմ, որք ոչ են յայսմ գաւթէ, և զայն ևս պարտէ ինձ ածել այսր. և ձայնի իմում լուիցեն և եղեցին մի հօտ և մի հովիւ. այսինքն պարտ է ինձ քարոզութեամբ առաքելոց կոչել և զայլ ազգս հեթանոսաց ի մի գաւթ ընդ հաւատացեալ հրէից, և եղեցին մի հօտ. և եղեցին յօդեալ ի մի գլուխ Ակեղեցւոյն որ եմ ես: Ասանորոյ և Պօղոս առաքեալն բազում անգամ նմանեցուցանէ զհանրական Ակեղեցին՝ մարմնոյ, որոյ գլուխն Քրիստոս ասէ: Աւ այլքն ամենեքեան անգամք են միմեանց, ոմանք աչք, ոմանք ձեռք, ոմանք ոտք. այս է ոմանք առաքեալք, ոմանք Հայրապետք, ոմանք Ապիսկոպոսք, ոմանք քահանայք, ոմանք ժողովրդականք. և ո՛չ որ է գլուխ բոց ի Քրիստոսէ: Իսկ զուցէ ասիցես թէ՛ որպէս Ակեղեցին Հայոց, և Հռոմոնց և Ֆրանկաց, և այլոց ազգաց քրիստոնէից, որք են բազում և զանազանք է՞ մի միայն Ակեղեցի:

Պատասխանէ այսմ առաքեալն Պօղոս յասին՝ ամենայն քրիստոնեայք մի մարմին և մի հոգի են. վասն զի ամենեքեան

ասէ յօղեալ են ի մի գլուխն Յիսուս, յոր հաւատան և յուսան, և ունին զմի Տէր. մի հաւատ, մի մկրտութիւն, մի Աստուած և հայր ամենեցուն:

Այսպէս և Տէրն մեր ասէ թէ՛ ամենայն քրիստոնեայք եղիցին մի հօտ. վասն զի ամենեքեան ունին զմի հովիւ՝ որում հետեւին և լսեն ձայնի նորա. որ է Յիսուս Վրիստոս: Աւ այս միութիւնս Ակեղեցւոյ կայանայ մանաւանդ ի խաղաղութիւն և ի սէրն քրիստոնէից ընդ միմեանս: Արպէս ասէ առաքեալն Պօղոս՝ փութացէ՛ք սրահել զմիարանութիւն հոգւոյն յօղիւ խաղաղութեան. և յայլում տեղոջ ասէ՝ խաղաղութիւնն Վրիստոսի հաստատեսցի ի սիրտս ձեր, յոր կոչեցայքն միով մարմով: Ասանորոյ և Տէրն մեր ասէ՝ այսու զիտասցեն ամենեքեան՝ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս: Աւստի յայտ է թէ միութիւնն ըզնհանրական Ակեղեցւոյն կայանայ նախ և առաջ ի պաշտել ամենեցուն զմի Աստուած հայր մեր, և մի Տէր Յիսուս, և մկրտիլ ի մի մկրտութիւն յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ: Աւ ունիլ մի միայն Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի Վրիստոսի: Աւ զմի միայն հաւատ Տեառն, որ է հաւատամքն երկուց առաջին տիեզերական ժողովոց՝ Աիկիոյ և Պոստանդինուպօլի. և պահել զմի օրէնքս Յիսուսի Վրիստոսի, որ է խաղաղութիւն և սէր ընդ միմեանս, և զայլ պատուէրս Աւետարանին, և առաքելոց, և սպասել ամենեցուն միոյ յուսոյ՝ որ է կեանք յաւիտենական: Աւ զայս ամենայն արարեալ լինիմք ամենեքեան մի հօտ միոյ գլխոյն Յիսուսի Վրիստոսի: Աւ այսպէս ամենայն քրիստոնեայքս առնեմք զմի միայն

ընդհանրական Ակեղեցի, որոյ իշխանն միայն Վրիստոս է:

Ահա՛ սցս է ճշմարիտ մեկնութիւն կաթուղիկէ Ակեղեցւոյն ըստ Աւետարանական վարդապետութեան, և ըստ քարոզելոյ սրբոց Հայրապետաց և տիեզերագումար ժողովոց:

Ի ճշմարիտ մեկնութենէ աստի՛ յայտնի երևի թէ՛ սխալին այնոքիկ՝ որ զմասնաւոր Ակեղեցի իւրեանց՝ Աթուղիկէ անուանեն: Ահա սոքա են, որք ոչ ձանաչեն զգիրս և ոչ զուղղութիւն գրոյն, և ո՛չ զիտեն եթէ՛ Աթուղիկէն է Հոռոմոց բարբառ, որնշանակէ զբովանդակ ընդհանրական և տիեզերածաւալ ժողովուրդն ամենայն ազգաց հաւատացելոց՝ որ բնակին ընդ ամենայն աշխարհ:

Աւստի յայտնի է թէ կարի յոյժ մոլին այնոքիկ, որք զի մի միայն կողմն երկրի պարունակեալ զմասնաւոր Ակեղեցին իւրեանց՝ ընդհանրական և տիեզերածաւալ ասեն: Զի՞նչ ասէիր արդեօք մարդոյն այնմիկ, որ ցուցանելով քեզ զտուն իւր ասիցէ, այս տուն՝ բոլոր աշխարհս է. ո՛չ նպագէն դու զայն մարդ մոլեղնեալ համարէիր, և խելացնոր իսկ:

Այսպէս մոլեղնին, որք զմի միայն զԱկեղեցի իւրեանց ընդհանրական ասեն: Վասնորոյ ո՛չ Ակեղեցին Հայոց, և ոչ Հոռոմոց, և ո՛չ Աթինացւոց կարելի է ասել Աթուղիկէ առանձնակի: Այլ ամենայն Ակեղեցիք յօղեալք ի միասին կացուցանեն զԱթուղիկէ Ակեղեցին քրիստոնէից նման անգամոց՝ որք ամենեքեան ի միասին զմի կաաարեալ մարմին բաղկացուցանեն՝ որոյ գլուխն միայն Վրիստոս է: Իսկ զուցէ եթէ ասասցեն Ակեղեցին իւր

եանց միայն է Աթուղիկէ ուղղաֆառաւոր զօրով, և ոչ այլոց Ակեղեցիքն՝ մոլորեալ զօրով ի ճշմարիտ հաւատոց. բայց զայս ասել՝ է հայհոյել ընդդէմ հոգւոյն սրբոց և ընդդէմ Վրիստոսի, և սուտ առնել զնոսա. քանզի Վրիստոս և հոգին սուրբ յայտնապէս ուսուցանեն մեզ թէ արեգեփածաւալ Ակեղեցին ո՛չ մոլորի ի ճշմարիտ հաւատոց: Արպէս Տէրն մեր ասէ թէ՛ զբունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեացեն: Իսկ Ակեղեցին Վրիստոսի ո՛չ միայն է ժողովուրդն Աթինացւոց, և ոչ այլ ոմն մասնաւոր և առանձնակի ժողովուրդ. քանզի Վրիստոս ո՛չ միայն ի Հայաստան և կամ ի Արենկիտան շնեաց զեկեղեցի իւր, այլ ընդ ամենայն արեգեփած, որովհետեւ առաքեաց Ղապրեալսն քարոզել ամենայն արարածոց: Աւ փասնայտորիկ Ակեղեցին Վրիստոսի է ընդհանրական Ակեղեցին ամենայն ազգաց, և ըստ անսուտ բան ի Փրկչին, թէ զբունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեացեն. վասն որոց և ոչ մոլորիլ իսկ կարէ:

Վարձեալ Տէրն մեր Յիսուս յետ համբառնարոյն հրամայեաց առաքելոցն զնալ աշակերտել զամենայն հեթանոս: Ապա ասէ, ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչ ի կատարած աշխարհի, այսինքն ընդ ձեզ և ընդ աշակերտս ձեր, և յայտ է թէ առաքեալքն ոչ մնացին կենդանի մինչ ի կատարած աշխարհի: Իսկ առաքեալքն աշակերտեցին ոչ միայն զԱթինացիս, այլ զամենայն ազգս, որպէս հրամայեր նոցա Վրիստոս: Ապա Վրիստոս է ընդ ամենայն մասնաւոր Ակեղեցիս որք աշակերտեցան յառաքելոցն: Աւ թէ Վրիստոս է ընդ ամենայն Ակեղեցիս մինչ ի կատարած՝ որ-

պէս ինքն խոստացաւ, ապա որպէս հնար է զի այլ Ակեղեցիքն մոլորին ի ճշմարտութենէ, և քոյդ միայն ուղիղ մնայ. մի՛ թէ ոչ տեսանես, զի ասել զայս է ընդդէմ Վրիստոսի հայհոյութիւն: Քանզի յասելն՝ թէ մերն ուղղաֆառաւոր է, և ոչ այլոցն, ասել կամիս թէ Վրիստոս միայն ընդ մեզ է, և ոչ ընդ այլոց. զի թէ լինէր և ընդ այլոց, ոչ մոլորէին ի հաւատոյն Վրիստոսի: Իսկ ասելն թէ Վրիստոս է միայն ընդ մեզ, և ոչ ընդ այլոց. այս բան ստեղծէր յիսուս որ ոչ միայն առաքելոց ասաց, այլ ամենեցուն թէ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ այս է՝ թէ ընդ ձեզ և ընդ աշակերտսն ձեր, որ ունին լինել յաջորդք ձեզ: Վարձեալ նոյն Տէրն ասաց աշակերտացն թէ ես ազաւեցից զՀայր, և այլ միսիթարիչ տացէ ձեզ, ընդ ձեզ բրնակեցի ի յախտեան. այս է՝ թէ ընդ ձեզ և ընդ փոխանորդսն ձեր. և յայտ է թէ առաքեալքն ոչ մնացին յերկրի ի յախտան. և հոգին ճշմարտութեան բրնակի յախտեան ընդ անդակալսն ամենայն առաքելոց, ապա ոչ Հայոց, և ոչ Աթինացւոց, և ոչ այլոց՝ որք հիմնեցան յառաքելոց, մոլորին ի ճշմարիտ հաւատոց. քանզի թէ մոլորին սոքա, հարկ է ասել՝ կամ հայր Աստուած ոչ լուաւ զազանս Վրիստոսի և ոչ ետ ամենայն Ակեղեցեաց զհոգին ճշմարտութեան. կամ թէ զհոգին զոր ետ մեզ ոչ է հոգի ճշմարտութեան, այլ հոգի մոլորութեան, զոր քաւ լիցի ասել:

Իսկ որովհետեւ անհնար է արտաբերել զայսպիսի հայհոյութիւնս, ապա պարտ է մեզ ասել թէ ամենայն Ակեղեցիք են ի մի ուղիղ գաւանդութեան. և ամենեքեան

ի միասին զմի միայն Աթուղիկէ առնեն:

Եւ զայս ճշմարտութիւնս ոչ թէ միայն Տէրն այլ և հոգին սուրբ բերանով առաքելոցն ուսոյց մեզ թէ ամենայն Ակեղեցիք Վրիստոսի ոչ ունին մոլորիլ ի ճշմարտութենէ: Ասան այսորիկ Պօղոս առաքեալն զբերով առ ամենայն Ակեղեցիան խոստանայ ամենեցուն շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Վրիստոսի՝ հաստատութիւն և անարատութիւն ի ճշմարիտ հաւատան մինչև ի կատարած աշխարհի. վասնորոյ Աորնթացւոց և Փիլիպպեցւոց Ակեղեցեաց զրէ թէ՛ դուք մի՛ նուազեցիք և մի՛ իւրիք շնորհօք ակնկալեալք յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Վրիստոսի: Ար և հաստատեցէ զձեզ մինչ ի կատարած յանարատս յոր Տեառն մերոյ Յիսուսի Վրիստոսի: Եւ թէ գոհանամ զՄատուծոյ իմոյ վասն հաղորդութեան ձերոյ ընդ Եւետարանին: Աստահ եմ յայդ՝ զի որ ըսկաւն ի ձեզ զգործս բարեաց կատարեցէ մինչև յոր Տեառն մերոյ Յիսուսի Վրիստոսի:

Վմանապէս Ափեսացւոց և Թեսաղօնիկեցւոց Ակեղեցեացն զրէ թէ՛ հաւատարիմ է Տէր որ և հաստատեցէ զձեզ և գահեցէ ի չարէ անտի. և միւսն և հաստատութիւն ճշմարտութեան կոչէ. ի բանից աստի յայտ է նախ և առաջ թէ Պօղոս խոստանայ զհաստատութիւն և անարատութիւն ի հաւատս Վրիստոսի: Վանդի անդ խօսի վասն հաղորդութեան ընդ Վրիստոսի և ընդ Եւետարանին. և վասն ճշմարտութեան:

Արիւորդ՝ յայտ է զի առաքեալն խոստանայ զայս՝ ո՛չ թէ միայն Ակեղեցեացն

Փիլիպպեցւոց, Թեսաղօնիկեցւոց և Ափեսացւոց, որ են հոռոմքն, այլ ամենայն Ակեղեցեացն Վրիստոսի: Վանդի հաւատարիմ է Մատուած. զի ո՛չ միայն զհոռոմս կոչեաց ի հաղորդութիւն որդւոյ իւրոյ, այլ առաքեաց զառաքեալսն յամենայն Ակեղեցիս և կոչեաց զնոսա ի հաւատարս Վրիստոսի:

Արրորդ՝ յայտ է զի առաքեալն խոստանայ զայս ո՛չ թէ միայն քրիստոնէիցն որ էին ի ժամանակս իւր, այլ ամենայն հեռեւողաց նոցին մինչ ի կատարած աշխարհի: Վանդի ասէ թէ՛ հաստատեցէ զձեզ մինչ ի կատարած յանարատս մինչ յոր Տեառն մերոյ Յիսուսի Վրիստոսի. այս է՝ վերջին օրն աշխարհի: Իսկ քրիստոնեայք ժամանակի Պօղոսի ոչ մնացին կենդանի արդէն: Ապա ուրեմն երևի յայտնապէս որ մինչ առաքեալն ասէ՛ հաստատեցէ մինչև ի կատարած, կամի ասել թէ՛ հաստատեցէ զԱկեղեցին ձեր, որ մնալոց է անարատ մինչև ի կատարած աշխարհի: Չորրորդ յայտ է զի առաքեալն խոստանայ զայս ի կողմանէ Մատուծոյ. հաւատարիմ է Մատուած ասէ, որ կոչեացն ըվձեզ. այսինքն Մատուած ոչ է ստասաց, այլ ճշմարտախօս և հաւատարիմ հատուցանօղ զոր ինչ միանգամ խոստանայ: Իսկ այս՝ Մատուած կոչեաց զձեզ ի ճշմարիտ հաւատն առ ի առնել զձեզ սուրբս և անարատս. ապա ուրեմն ունի կատարել նա զխոստմունս իւր ճշմարտապէս առանց յապաղման: Ի սոյն բան, և Պետրոս առաքեալն ասէ եկեղեցեացն Պոնտացւոց, Ապադոզիացւոց, Վաղատացւոց, Եսիացւոց, Իւլիթանացւոց՝ որք են արեւելեան եկեղեցիք,՝ ծնեալք վերստին ո՛չ

յապականացու սերմանէն, այլ յանապականացուէն կենդանի և մշտնջենական բանինն Աստուծոյ. քանզի բան Տեառն մնայ յաւիտեան. այսինքն է՝ բանն որ ի ձեզ աւետարանեցաւ: Արով բանիւք հաստատէ առաքելան Պետրոս թէ՛ բանն հաւատոյ աւետարանեցաւ արեւելեան Ակեղեցեացն՝ մնացէ ի նոսա անապական և մշտնջենաւոր յաւիտեանս յաւիտենից: Ասան այսմ պատճառի և ի յայանութեանն Յովհաննու յեկեղեցիսն Ասիացւոյ երեւոյան պատկերս Ա. ոսկեղէն աշտանաօք. ասէ մեկնիչն թէ՛ արեւելեան Ակեղեցիքն լինելոց են յամենայն ժամ մաքուրք, և ոչ ունին ապականիլ ի հաւատս, ըստ նմանութեան ոսկւոյ որ է նիւթ ամենամաքուր և անապական: Ի բանիցս յայցանէ յայտ է թէ՛ Հոգին սուրբ ուսուցանէ մեզ բերանով առաքելոց, թէ Ակեղեցիքն Վրիստոսի ոչ ունին մոլորիլ ի ճշմարիտ հաւատոց. վասրևորոյ ով որ ասէ թէ՛ Ակեղեցին իւր միայն է ուղղահաւատ, և այլոցն մոլորեալ են, ևս հայհոյէ ընդդէմ Վրիստոսի և ընդդէմ Հոգւոյն սրբոյ: Վանզի Վրիստոս և Հոգին սուրբ յայտնապէս խոստանան ամենայն Ակեղեցեաց անապականութիւն և անարատութիւն ի ճշմարիտ հաւատս: Աւ այս Աստուածային խոստումն անշարժ և հաստատուն եկաց մինչև ցայսօր: Գլ ի մինչև ցայսօր ոչ որ ազդ յառաքելոց քարոզեալ ի բաց անկաւ ի հաւատոց. զօրորինակ Ակեղեցիքն Հայոց, ասորոց, հռոմոց, և այլոց արեւելեան քրիստոնէից, թէպէտ կորուսին զթագաւորութիւնս իւրեանց, սակայն ոչ կորուսին զհաւատս իւրեանց ըստ խոստման Տեառն մե-

րոյ Յիսուսի Վրիստոսի, և հոգւոյն սրբոյ:

Այս է սքանչելիք. զի թրեւելեան քրիստոնեայք ի մէջ այնքան տառապանաց և աղէտից գերու թեան, առանց գրոց զըսրատանց, սակայն տակաւին անթառամ և հաստատուն պահին զհաւատս Վրիստոսի: Ա՞յլ զարմանալի սքանչելեացս. դու ես Տէր՝ որ զայս հրաշս առնես, առ ի անսուտ առնել զխոստումնս քո, դու ես որ փոխանակ զիտութեանց և գրոց և ուսուցչաց, տաս մեզ զհոգիդ քո սուրբ, որ բնակեալ ի սիրտս միամտաց, առաւել ստուգէ զնոսա ճշմարտութեամբ քով, քան զամենայն իմաստութիւնս Աստուածաբանից: Բազում մարդիկք խնդրեն տեսանել զսքանչելիս վասն ճշմարտութեան հաւատոց մերոց, բայց ես ոչ կամիմ զայլ զսքանչելիս տեսանել քան թէ զսքանչելիս հաստատութեան և ամբութեան արեւելեան քրիստոնէից ի հաւատս Վրիստոսի, ուրք ամենեքեան թէպէտ տղէտք և անզիրք են, սակայն առաւել հաստատուն ի ճշմարտութեան Աւետարանին գտանին քան զամենայն իմաստունս և Աստուածաբանս, և հանապազօր պատրաստ են ի թափել զարիւնս իւրեանց վասն անուանն Վրիստոսի: Արպէս և պատահի բազում անգամ զի ճշմարտութիւն ասացելոցս յայտնի ի վրայութիւն իսկ սչոց մերոց. մի՞ թէ ոչ սեսանեմք հանապազօր յարեւելս՝ զի արք տղէտք և անխմտտք նահատակին վասն հաւատոցն Վրիստոսի: Աջահա Ա. ամաւ յառաջ, համալ մի նահատակեցաւ՝ որ էր յազգէ Հայոց ի Առստանդինուպօլիս:

Նմանապէս և Ժ. ամաւ յառաջ դերձակ նահատակեցաւ ի Պրուսա Աւ Աբ-

դայ մի յոյն ազգաւ նահատակեցաւ ի Արտանդնուպօլիս, որ ոչ այլ ինչ զիտէր՝ քան թէ աղօթել առ Աստուած յանապատի: Բայտ այսոցիկ և այլ բազում մարտիրոսք նահատակին յերկրի մերում: Աւուստի՞ գայ այսպիսի հրաշալի հաստատութիւնս ի հաւատն Վրիստոսի առանց զիտութեան և Աստուածաբանութեան, եթէ ոչ՝ ի հոգւոյն սրբոյ: Արովհետև ասէ առաքեալն Պօղոս՝ ո՛չ որ կարէ ասել Տէր Յիսուս եթէ ոչ հոգւովն սրբով:

Պարծեսցին արեւտեան քրիստոնեայք ի զիտութիւնս իւրեանց. պարծեսցուք և մեք ի տունտունութիւնս և յուսուցմունս հոգւոյն սրբոյ: Պարծեսցին նորա ի թագաւորութիւնս իւրեանց՝ իսկ մեք պարծեսցուք ի Տէրութիւնն Վրիստոսի: Պարծեսցին նորա ի փիլիսոփայս և յաստուարանս իւրեանց. պարծեսցուք և մեք ի մարտիրոսս և ի նահատակս մեր: Ծիծաղելի է խելագարութիւն ոմանց՝ որք ասեն թէ՛ Աստուած վասն պատժելոյ զարեւելան քրիստոնեայսն յաղաղս հերձուածոց՝ բարձաւ ի նոցանէ զթագաւորութիւնըս իւրեանց: Բայց ով խելագարք մի՞թէ հերձուածողք էին առաջին քրիստոնեայքըն և աշակերտքն Վրիստոսի, որք առանց թագաւորութեան և իշխանութեան հանապազ ի հալածանս և ի տանջանս հեթանոսաց շրջին. փոխեալ լերանց ի լերինս, ի քաղաքաց ի քաղաքս զամենայն երկիրն արեամբն իւրեանց լցուցանէին: Ա՞լ մեծի խելագարութեանդ, զիտեա ո՞վ տգէտ. զի անկումն թագաւորութեան, ո՛չ եթէ հերձուածոց նշանակ է՛, այլ նշանակ է ճշմարտութեան հաւատոյ մերոյ: Վանդի Տէրն մեր յայտնի առնէ՛ թէ թա-

գաւորութիւն իւր և աշակերտացն իւրոց՝ ո՛չ է յաշխարհէ աստի:

Վմանապէս և առաք՛ալն ասէ թէ՛ հաւատացեալքն հանապազ ի հալածանս կայցեն: Ասանորոյ անկումն թագաւորութեան աշխարհիս ցուցանէ, մանաւանդ թէ մեք Վրիստոսի ճշմարիտ հաւատացեալքս աշակերտեմք, նման առաջին հաւատացելոց և աշակերտացն Վրիստոսի: Վարձեալ զիտելի է զի արեւելեան քրիստոնեայք թէպէտ առանց թագաւորութեան են, սակայն առաւել երջանկութիւնն և անդորրութիւն ունին քան ըզնոսս որք ընդ թագաւորութեամբ են: Աս բազում անգամ լուայ ի Վրանկաց, որք երանէին զարեւելցի քրիստոնեայսն՝ ասելով թէ, յետ տալոյ զհարկս Ա. կամ Ժ. զուռուշ ի մի տարին, տպա հանդարտ ի խնդութիւնս և յուրախութիւնս շրջին: Իսկ երբ միւս քրիստոնեայքն բռնադատին գնալ ի պատերազմ ընդդէմ եղբարց իւրեանց, և սուր քարշելով ընդդէմ խաչին մեռանին, որոց զանտանելի թշուառութեանց լիովին խօսիլ ինձ ոչ է հարկ աստէն. քանզի բազում այն է՝ որ ոչ միայն ի սիրոյ, այլ և քաղցուէ մեռանին: Աւայս պատահի՛ ո՛չ թէ ի պակասութենէ կերակրոց. զի յամենայն քաղաքին լի են կերակրօք, այլ ի պակասութենէ արծաթոյ, զոր յափշտակեն ի ձեռաց աղքատաց հարկապահանջքն թագաւորաց: Արհեստաւորք, և ուէնջպէրք թէ շահին ի միում աւուր Ի. ստակ, Բ. Ժ. պարտին տալ թագաւորին:

Վմանապէս և վաճառական մի՛ որ ի ձեռս իւր ունի Ա. զուռուշ, պարտի տալ ամ յամէ Բ. Ժ. զուռուշ. ըստ այսմ և

այլք ըստ մեծութեան ընչից իւրեանց պարտաւորին վճարել: Աւ յորժամ ոչ կարողացին հատուցանել զայսպիսի անտանելի հորիս, յայնժամ հարկահանք թագաւորաց յափշտակեն զկահ և զկարասիս նոցա, և թողուն զնոսա մերկ և չքաւորս և այսպիսի թշուառութիւնք նոցին գրեթէ անդադար են. քանզի անդադար է պատերազմն ի մէջ նոցա:

Իսկ մեք՝ գոհութիւն Աստուծոյ, ոչ երբէք տեսանեմք զայսպիսի թշուառութիւնքս. և թէ փորձութիւն ինչ պատահեցի մեզ ի ձեռաց տաճկաց ևս, այն վասն հաւատոյ և վասն անուանն Յիսուսի Վրիստոսի է: Աւ այսպիսի պատահմունք ծնանին ոչ եթէ ի պակասութենէ թագաւորութեան մերոյ, այլ ծնանին ի սեպհական խելադարութենէս մերմէ՝ որք անձամբ անձին բերեմք փորձութիւնս, կռուելով և վիճելով ընդ միմեա՝ սակա ընդունայն բանից. քանզի թէ իմաստուն և հանձարեղ լինէաք, և իւրաքանչիւր ոք զիւր բանին խելացութեամբ հոգայր, ճշմարտութեամբ ասեմ՝ ոչ երբէք լինէր մեզ տեսանել զայսպիսի փորձութիւնս. ուստի և երանելի լինէաք ի վերայ երկրի քան զամենայն ազգս մարդկան: Այր աղագաւ բացերե տեսանի թէ՛ Աստուած եբարձ ըզթագաւորութիւնս մեր յաշխարհէ, բայց ոչ առ ի պատժել զմեզ. զի թէ մեք իմաստութեամբ վարեցուք զկեանս մեր, առաւել հանդարտութիւն ունիմք տեսանել, քան զայնոսիկ՝ որք ընդ թագաւորութեամբն են. այլ եբարձ զնա վասն փառաց անուան իւրոյ, և առ ի առնել նման առաջին քրիստոնէիցն և աշակերտացն Վրիստոսի: Յոր վայր կատարի մարդարեութիւնն՝ Վաւթի՝

որ ասէ՝ ասաց Տէր ց Տէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եղից զթշնամիս քո պատուանդան ոտից իմոց, և տիրեսցես դու ի մէջ թշնամեաց քոց: Յոր տեղե տիրէ Տէրն մեր Յիսուս ի մէջ թշնամեաց իւրոց եթէ ոչ յարեւելս. ուր հաւատացեալքն երկիրպագանեն Տէրութեանն Վրիստոսի, ի մէջ տէրութեան թշնամեաց նորա: Օ, Ալկեղեցիս կանգնեցուցանեն յանուն նորա ընդդէմ տաճկացն, և կոչն զանուն Վրիստոսի ընդդէմ գոչողացն զանուն հակառակորդին Վրիստոսի: Աւստի յայտ է թէ Աստուած եբարձ զթագաւորութիւնն յարեւելեան քրիստոնէից ոչ առ ի պատժել, այլ վասն փառաց անուան իւրոյ. որպէս զի յամենայն ժամ անպակաս լիցի ի մէջ ընդհանրական Ալկեղեցեացն Վրիստոսի մարտիրոսք և նահատակք, որք վկայեսցեն ճշմարտութեան հաւատոյն Վրիստոսի հեղմամբ արեան իւրեանց, և հանդոյն առաքելոցն Վրիստոսի խոստովանեցին զանուն նորա ի հալածանաց և չարչարանաց, որպէս նախագուշակաց հոգին սուրբ բովանդակ յայանութեամբն Յովհաննու ի սկզբանէ մինչև ի զալուստն Վրիստոսի: Հանապաղ հալածանք և չարչարանք կրելոց են ի մէջ հեթանոսաց, և այս կատարի յարեւելս յամենայն ժամանակի: Ի բանից յայսցանէ յայտնի թէ արեւելեան և արեւմտեան Ալկեղեցիքն ամենայն հաւասարապէս ուղղահաւատ և Աթուղիկէ են. և ամենեքեան ի միասին զմի միայն ընդհանրական Ալկեղեցի առնեն: Իսկ գուցէ ասացեն թէ որպէս կարելի է արեւելեան և արեւմտեան Ալկեղեցին հաւասարապէս ուղղահաւատ Աթուղիկէ լինել ի միասին. որովհետեւ այնքան զանա-

զանութիւնք ի մէջ նոցա գտանին. որ և ոչ իւրիք միաբանին: Պատասխանեմ՝ այդ կարծիքդ սխալ իմն է եղբայր՝ զոր պարտ է քեզ ի բաց ձգել. քանզի դու կարծիս այն զանազանութիւնք հաւատոյ, բայց ոչ՝ զի ոչ են զանազանութիւնք հաւատոյ, այլ միայն իմաստասիրական բառից և կերպից խօսելոյ: Իսկ եթէ ասես առ միութիւնն ընդհանրական Ակեղեցւոյն հարկաւոր է նաև միաբանութիւն իմաստասիրական բառից, և կերպից խօսելոյ, այդ ևս սխալանք է. զոր պարտ է քեզ ի բաց ձգել, թէ ճշմարտագիւտ ես: Քանզի միութիւնն Ակեղեցւոյն կայանայ ի միաբանութեան հաւատոյ մերոյ. և ոչ ի բառս իմաստասիրաց: Քի թէ միաբանութիւն իմաստասիրական հարկաւոր լինէր առ միութիւնն ընդհանրական Ակեղեցւոյն, ապա անհնարին լինէր այս միութիւնս. որովհետև յոչինչ ժամանակ տեսանեմք զի երկու մասնաւոր Ակեղեցիք ի մի և ի նոյն իմաստասիրական կերպ գտեալ իցեն, այլ իւրաքանչիւր մասնաւոր Ակեղեցի զիւրն ունի իմաստասիրական բառս և կերպս խօսից: Քանզի որպէս զանազան են լեզուք մասնաւոր Ակեղեցեաց, այսպէս և իմաստասիրականն կերպ խօսից. ուստի և զանազան են եղանակք մեկնելոյ զխորհուրդ հաւատոյն: Աւ որպէս միութիւնն ընդհանրական Ակեղեցւոյն ոչ բառնազգանազանութիւն լեզուաց, այսպէս: ոչ բառնայ զզանազանութիւնն խօսելոյ և ըզզանազանութիւնն իմաստասիրական բառից:

Արդարև, որպէս հնար է զի Ակեղեցին շայտց որ ոչ զիտէ զլեզունն շոռոմոց, կարասցէ խօսիլ և մեկնել ըստ կերպի և ըստ

նմանութեանն շոռոմոց: Աւ անդրադարձեալ՝ որպէս և Ակեղեցինն շոռոմոց:

Այլ իւրաքանչիւր մասնաւոր Ակեղեցի զիւրն ունի զյատուկ իմաստասիրական բառս և կերպս խօսելոյ. որով մեկնէ զխորհուրդ հաւատոյն ըստ սովորութեանն լեզուի իւրոյ:

Պատմի այսմ օրինակ մի զեղեցիկ յատուածաշունչ զիրս. զի Մովսէս ճանէ ի գիրս ծննդոց թէ՛ Յակոբ նահապետն և Աբրահամն իւր, երբ բաժանելոց էին ի միմեանց, կանգնեցին զարձան մի ի վերայ լերին միոյ և կուտեալ քարինս ի վերայ նորա արարին բլուր: Աւ յետոյ ասէ Մովսէս թէ՛ կոչեաց զնա Աբրահամ կարկառ վկայութեան, իւրաքանչիւր ըստ յատուութեանն լեզուի իւրոյ:

Տեսանե՞ս՝ ո՞վ ընթերցող թէ որպէս Աբրահամ և Յակոբ որք էին ի զանազան ժողովոցոց, հարկեցան և զանազան կերպիւանուանել զբլուրն վասն զանազանութեանն լեզուաց իւրեանց:

Աւ որպէս Մովսէս ասէ՛ իւրաքանչիւր ըստ յատուութեանն լեզուին իւրոյ, այսպէս և ի ժամանակս փոքունն թէ՛ ողբսի կայսերըն սորն Աիւրեղ աղեքսանդրացին, և ամենայն Ապիսկոպոսունք ասէին մի բընութիւն ի Քրիստոս. քանզի այս բառս բնութիւն՝ նշանակէր ի լեզուս նոցա զըզանգակ միաւորեալ էութիւնս Քրիստոսի:

Իսկ ի նոյն ժամանակս Մնատիք եղեալ ուղղահաւատ եպիսկոպոսունքն ասէին երկու բնութիւն, որ նշանակէր ի լեզուս նոցա զպարզ և զմասնաւոր էութիւնս աստուածութեանն և մարդկութեանն Քրիստոսի միացելոյ ընդ միմեանս անշփոթ միազութեամբ: Աւ երկոքեանքն ևս թէպէտ

զանազանաբար խօսեին, սակայն հաւատ
նոցա միեւնոյն էր: Վանդի երկոքեանքն ևս
միաբան ձայնիւ հաւատային զՎրիստոս
կատարեալ Աստուած և կատարեալ մարդ.
և դաւանեին ի Վրիտոս զաստուածու-
թիւնն և զմարդկութիւնն անբաժանելի և
անշփ թ միացութեամբ. որ է բան հաւա-
տոյ: Թէպէտ հակաձառեին յասելն զմի
բնութիւն և զերկու բնութիւնս, որ է լոկ
խնաստասիրական կերպ խօսելոյ. և ոչ բան
հաւատոյ. և թէպէտ երկոքեանն ևս զա-
նազանին ի վերայ մեկն լթեան մարդեղու-
թեանն Վրիստոսի, սակայն հաւատալ եր-
կուքն ևս քրիստոնեայ և Մատուղիկէ հա-
մար ն:

Ուստի յայտ է թէ միութիւն ընդ հանրա-
կան Մատուղիկէ Ազիե շեցւոյն կայանայ՝ ոչ
եթէ ի միաբանութեան իմաստասիրական
բառից և կերպից խօսելոյ, այլ ի միաբա-
նութիւն հաւատոյ մերոյ: Աւ այս զանա-
զանութիւն մեկնելոյ զբանս հաւատոյ՝ ծը-
նանի, ոչ եթէ միայն ի նուազութենէ լե-
զուաց, այլ և երբեմն ի զանազանութենէ
ժամանակաց:

Եւ յայտս միեւնոյն մասնաւոր Ազիեղեցին
Հոռոմոց ուսուցանէր զզան ազան իմաստա-
սիրութիւն ըստ զանազանութեան ժամա-
նակաց: Վանդի յայտնապէս երևի ի զիրս
եկեղեցական պատմութեանց թէ՛ Ազիե-
ղեցին Հոռոմոց ի ժամանակս Վեստորի՝
ասէր մի բնութիւն ի Վրիստոս, և ոչ եր-
կու բնութիւն: Օ՛ի յայնժամ Վ. բնու-
թիւն ասելն նշանակէր զբաժանումն աս-
տուածութեան և մարդկութեանն Վրիս-
տոսի, որ է մեծ հերձուածողութիւն: Մա-
կայն յետոյ ի ժամանակս Աւաղիքիսի,
սկսաւ Վ. բնութիւն ասել, և ոչ մի բը-

նութիւն. զի յայնժամ մի բնութիւն ասել
նշանակէր ի լեզուս նոցա շփոթումն և զայ-
լայլութիւն աստուածութեան և մարդկու-
թեանն Վրիստոսի, որ է հերձուած: Ուս-
տի բացերև երևի թէ՛ մի և նոյն Ազիեղեցին
Հոռոմոց ըստ զանազան ժամանակաց փո-
փոխէր զինաստասիրական բառն և զկերպն
խօսելոյ, և զմեկնութիւն զանբաժանելի
և զանշփոթ միացութիւն աստուածու-
թեան և մարդկութեան Վրիստոսի: Մա-
կայն և այս փոփոխումն մեկնութեան և
ինաստասիրական վարդապետութեան ոչ
փոփոխէր զհաւատն իւր: Վանդի Ազիեղե-
ցին Հոռոմոց ի ժամանակս Վեստորի և ի
ժամանակս Աւաղիքի՝ ի հանապաղ զաւա-
նէր զԱստուածութիւնն և զմարդկութիւն
Վրիստոսի, անբաժանելի և անշփոթ միա-
ցեալ՝ որ է հաւատն մեր: Ուստի կրկին
յայտ լինի թէ զանազանութիւն կերպի
մեկնութեան խորհրդոյն հաւատոյ, ոչ
բառնայ զմիութիւն հաւատոյ և ընդ հան-
րական Ազիեղեցւոյն:

Որպէս և աստանօր Ազիեղեցիք Հոռո-
մոց և Մատիմացւոց ի ժամանակս Վես-
տորին և ի ժամանակս Աւաղիքիսի ասեն
Վ. բնութիւն ի Վրիստոս և ոչ մի բնու-
թիւն. քանզի նշանակէր մի բնութիւնն ի
լեզուս նոցա շփոթումն աստուածութեան
և մարդկութեանն Վրիստոսի: Իսկ Հա-
յոց և Եսորոց և Խալտոց և Զապէշից և
Աթէովպացւոց Ազիեղեցիքն ասեն մի բը-
նութիւն ի Վրիստոս, և ոչ Վ. բնու-
թիւն. քանզի Վ. բնութիւն նշանակէ ի
լեզուս նոցա զբաժանումն աստուածու-
թեան և մարդկութեանն Վրիստոսի: Մա-
կայն թէպէտ Վ. բնութիւնն ի լեզուս Հա-
յոց և այլոց վերոյգրեալ ազգաց քրիստո-

նէից նշանակէ զբաժանումն աստուածութեան և մարդկութեանն Վրիստոսի. բայց ո՛չ ունի զնոյն նշանակութիւն ի լեզուս Հռոմոց և Աթինացւոց. այլ միայն նշանակէ զանփոփոխութիւն բնութեանցն Վրիստոսի: Ամանապէս՝ և մի բնութիւն ասելն թէպէտ նշանակէ ի լեզուս Հռոմոց և Աթինացւոց շփոթումն, սակայն ո՛չ ունի զնոյն նշանակութիւն ի լեզուս Հայոց և այլոց վերագրելոցն. այլ միայն նշանակէ զանբաժանելի միացութիւն աստուածութեան և մարդկութեանն Վրիստոսի. քանզի հայք և ստորիք և այլքն վերոյք, թէպէտ մի բնութիւն ասեն ի Վրիստոս, սակայն դաւանին յայնապէս թէ՛ աստուածութիւնն և մարդկութիւնն Վրիստոսի, անշփոթ և անփոփոխապէս՝ միացեալ են ընդ միմեանս. վասնորոյ և մեք ասեմք հանապազօր ի դաւանութեանն մերում:

Աստուածն մարդացեալ առանց փոփոխման, և առանց սլալալութեան. բայց խորշմք յասելոյ զերկու բնութիւնս. քանզի երկուութիւնն ի լեզուս մեր բառնայ ըզմութիւնն և բաժանումն բերէ: Այս է լեզուն այս է կերպն մեր: Մեք ո՛չ եմք սովոր կոչել զեր ինչ երկու՝ եթէ ո՛չ տեսանեմք բաժանեալ: Ասանորոյ և աստուածութիւնն ընդ մարդկութեանն Վրիստոսի ո՛չ են բաժանեալ, այլ միացեալք. վասնայսորիկ ո՛չ ասեմք Վ. այլ մի: Բայց ի լեզուս Հռոմոց և Աթինացւոց ոչ հարկաւոր է բաժանումն վասն ասելոյն զեր ինչ երկու. այլ միայն բաւական է անշփոթութիւնն և անսլալալութիւնն: Վանզի աստուածութիւնն և մարդկութիւնն Վրիստոսի ոչ են շփոթեալ ընդ միմեանս.

վասնորոյ ասեն Վ. բնութիւն ի Վրիստոս. զի մի բնութիւն ի լեզուս նոցա նշանակէ շփոթումն բնութեանցն Վրիստոսի:

Արդ՝ տեսանեա ո՞վ ընթերցող թէ որպէ՞ս մի բնութիւնն և Վ բնութիւնն միայն զանազանութիւն լեզուի է, և ո՛չ զանազանութիւն հաւատոյ: Արովհետեւ ամենայն Ակեղեցիքն միաբան ձայնիւ հաւատան զՎրիստոս կատարեալ Աստուած և կատարեալ մարդ. և անշփոթումն ասելով Վ. բնութեանց Վրիստոսի: Իսկ յետ անշփոթ միացութեանս՝ ոմանք Ակեղեցիք ասեն թէ գոյ ի Վրիստոս մի բնութիւն, և ոմանք թէ երկու: Վանզի ի վերայ սորա իւրաքանչիւր Ակեղեցի զանազանապէս խօսի, վասն յատկութեան լեզուի իւրոյ: Իսկ այս զանազանութիւնս խօսելոյ ոչ բերէ զզանազանութիւն հաւատոյ: Բայտ զանազան ճանապարհաց երկուց մարդկանց, որ մինն ի Հայաստանայ, և միւսն ի Ալեքսիկիստանայ՝ թէպէտ զանազան ճանապարհաւ աշխարհին իւրեանց զնան, սակայն երկուքն ևս հասին ի նոյն քաղաքն Արուսաղէմ, ուր գնալոցեին: Սապէս և միաբնակ և երկաբնակ Ակեղեցիք թէպէտ զանազան ճանապարհաւ խօսին ի վերայ բնութեանցն Վրիստոսի, սակայն երկուքն ևս ի մի և ի նոյն հաւատն հասին:

Վանզի յորժամ երկաբնակաց Ակեղեցիքն Վ. բնութիւն ասէ ի Վրիստոս, միտքն այս է թէ՛ Վրիստոս Աստուած է և մարդ. ամբողջ մնալով բնութեանցն: Այլ զայս միաբնակն ևս դաւանէ:

Ամանապէս և միաբնակն յորժամ մի բնութիւն ասէ, միտքն այն է զոր ասացաւ, զոր երկաբնակն ևս դաւանէր:

Ուստի յայտ է թէ միաբնակաց և երկաբնակաց Աշկեղեցիքն զնոյն հաւատ ունին, որովհետեւ երկոքեանք ևս հաւատան և դաւանին զանշիտթ և զանբաժանելի միութիւնն աստուածութեան և մարդկութեանն Վրիստոսի:

Ծիծաղելի է տղիտութիւնն Աոստանդինուպօլսի Յովհաննէս Փռանդացեալ վարդապետին, որ ի պատասխանին իւրում առ թուղթն շայտց վարդապետի միոյ՝ ասէ թէ՝ աստուածութիւնն և մարդկութիւնն միաւորեցան ընդ միմեանս, բայց ոչ միացան: Այլ ծիծաղելի իմաստութեանս. միթէ Յովհաննէս վարդապետն ոչ պարտէր տեսանել, որ ոչ միայն հայք, և ասորիք, իսպտիք, հապէշք, և եթօպացիք, այլ և ինքեանք լատինք և հռոմք ի կիր առնուն զբառն միացութիւն, վասն նշանակելոյ ըզմարդեղութիւնն Վրիստոսի: Վանզի բառըս այս ունիցիս՝ որով վարին Աթինացիք վասն նշանակելոյ զմիացութիւն աստուածութեան և մարդկութեանն Վրիստոսի, նշանակէ յատկապէս միացութիւն և ոչ միաւորութիւն: Վանզի վասն նշանակելոյ զմիաւորութիւն, ասեն՝ զունժունդցիս:

Նմանապէս և շռոմք ասեն սուրբ Անսիոս՝ որ նշանակէ յատկապէս միացութիւն և ոչ միաւորութիւն: Օյի վասն նշանակելոյ զմիաւորութիւն, ասեն՝ սինսիայ: Ուստի յայտ է թէ՝ և միաբնակաց և երկաբնակաց Աշկեղեցիքն միաբան ձայնիւ խոստովանին զմիացութիւն աստուածութեան և մարդկութեան Վրիստոսի: Այսնորոյ ամենեքեան ուղղահաւատ և Աթուղիկէ են, որովհետեւ ամենեքեան զմի հաւատ ունին ի վերայ մարդեղութեան Վրիստոսի:

Երդ ի բանիցս յայսցանէ, յայանի լինի՝ որ և արեւելեան և արեւմտեան Աշկեղեցիքն միայն զանազանին ի միմեանց կերպիւ խօսելոյ՝ որ ոչ է բան հաւատոյ: Իսկ բան հաւատոյ այն է՝ զոր աւետարանիչքն և առաքեալքն ուսուցին մեզ: Առաքեալքն ոչ միաբնակ էին և ոչ երկաբնակ, այլ միայն քրիստոնեայք էին, և զաշակերտս իւրեանց քրիստոնեայս առնէին, և ոչ միաբնակ կամ երկաբնակ: Այսնորոյ ոչ ուսուցին մի բնութիւն կամ Վ. բնութիւն ասել ի Վրիստոս: Եյլ միայն ուսուցանէին թէ՝ բանն մարմին եղև և բրնակեցաւ ի մեզ: Այլ թէ որ ի կերպարանքս Աստուծոյ էր՝ ոչինչ յափշտակութիւն համարեցաւ՝ զլինկին հաւասար Աստուծոյ, այլ զանձն ունայնացոյց՝ ըզկերպարանս ծառայի էառ, և կերպարանօք զտեալ իրբև զմարդ: Եյս է թէ բանըն Աստուած որ ունէր յառաջ զկատարեալ աստուածութիւն, էառ ի ժամանակի զկատարեալ մարդկութիւն, և միացոյց զնա ընդ աստուածութեան իւրում անբաժանելի միացմամբ: Այլ եղև Աստուած կատարեալ և մարդ կատարեալ: Ահա զոր ուսուցանէ մեզ հաւատն մեր, ի վերայ մարդեղութեան Վրիստոսի: Ահա զոր ուսուցին մեզ աւետարանիչքն և առաքեալքն: Այս է հաւատն մեր՝ զոր ուսուցին մեզ: Օյի նոքա լաւ զիտէին՝ մի բնութիւն ասել կամ Վ. բնութիւն, ոչ է բան հաւատոյ, եթէ բան հաւատոյ լինէր ընդէր ոչ ուսուցին մեզ. միթէ առաքեալքն թերի և անկատար ուսուցին զհաւատն, և թողն զքրիստոնեայսն կիսաքրիստոնեայս՝ զոր քաւ լեցի ասել ընդդէմ առաքելոցն Վրիստոսի:

Ապա ուրեմն դաւանեա: Ի հարկէ թէ մի բնութիւն կամ Բ. բնութիւն ասելն ոչ է բան հաւատոյ՝ այլ միայն կերպ խօսելոյ: Չոր յետ ԳՆ՝ ամաց փիլիսոփայքն քրիստոնէից մուծին ի մջ Ալկեղեցոյն: Աւրստ զանազան լեզուաց զանազանք են և բառքս, վասնորոյ ոմանք մի բնութիւն ասացին ի Վրիստոս, որպէս Մովսէսն ասաց, և այս զանազանութիւնս մնաց մինչև յօր Տեառն ևրոյ Յիսուսի Վրիստոսի: Աւ ապա յայնժամ ի բաց բարձցին զանազանութիւնք խօսելոյ և լեզուաց: Բայց որքան մնացէ զանազանութիւն լեզուաց, ոչ քան ժամանակ՝ ոմանք մի ասեն, և ոմանք Բ. ըստ յատկութեան լեզուացն:

Իսկ այս միայն է ողբալի. զի քրիստոնեայք որոց օրէնք եղբայրսիրութիւն է, ոչ հասկանալով զլեզուս միմեանց, անզգամարար ատեն և անարգեն զեղբայր և կոչեն զմիմեանս հերձուածող, կարծելով միայն զինքեանս ուղղափառ. ոչ թէ միայն զուղղափառութիւնն իւրեանց, այլ և զՎրիստոս և զքրիստոնէութիւնս կորուսին, զի ոչ ոք կարէ քրիստոնեայ լինել թարց պահելոյ զօրէնս Վրիստոսի, որ է սէր և խաղաղութիւն ընդ միմեանս: Աւ ոչ ի միտ առնուն խելագարքն, թէ մեք ամենեքեանս միայն ի կերպս խօսելոյ զանազանիմք, և ոչ ի բանս հաւատոյ: Աւ ոչ մտածեն թէ մեծ մեղք է քրիստոնէից՝ պատատել և վրդովել զԱլկեղեցին Վրիստոսի վասն այսպիսի իմաստասիրական բառ՝ ց:

Ասէ երկարնակն թէ՛ հայք շփոթեն զաստուածութիւն և զմարդկութիւնն Վրիստոսի՝ մի բնութիւն ասելով: Վեզ

այդպէ՛ս երևի ո՞վ երկարնակ, զի մի բնութիւնն ի լեզու քո այդպէս նշանակէ, իսկ ի լեզուս Հայոց ո՛չ է այդպէս. այլ զմիացութիւն նշանակէ:

Սապէս և միարնակն ասէ թէ՛ Աթիւնացիք բաժանեն զաստուածութիւն և զմարդկութիւնն Վրիստոսի Բ. ասելով: Վեզ այդպէս թուի ո՞վ միարնակ, զի երկուութիւնն ի լեզուս քո նշանակէ զբաժանումն, բայց ի լեզուս նոցա ո՛չ է այդպէս, այլ զանշփոթ և զանփոփոխ գոյն նշանակէ, և ո՛չ զբաժանումն:

Ահա՛ այդպէս պարտ է պատասխանել միմեանց միարնակ և երկարնակ ազգաց՝ եթէ կամէին հաճոյ լինել Վրիստոսի Տեառնն իւրեանց:

(ՄՆՆՆՆՆՆ Է ԵԵԵԵԵԵ)

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՊԸՏՄՈՒԹԻԻՆ

ԱՆՏԻՑ ԱՆՏԵԼՈՑ ՍԵՎԱՆԱՑ ՎԱՆԻՑ

(ՇԵՇՇՇՇՇՇՇ)

ԳՂՈՒԽ Օ

Օգնէ Միւր Եղբայրսին յաջորդոց և Դիպարտի անոցն:

Յետ Միսիթարայ յաջորդեաց Մարտիրոս Ապիսկոպոս Չէրքեղեանց ի Օսղկոցաձորոյ, ի Շարիզ գեղջէ, միարան սրբոյ Աջմիածնի, այր անարար և բարեկարգ. յառուրս սորա սուրբ Աստուածածնի եկեղեցոյ տանիսն սրբատաշ սալայատակ ծածկեցեալ է, որ ի միում արձանի գրի